ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՁԻԹԴՊՐ- ՄԱԳ-2017-4

գ. Ձիթհանքով «29» դեկտեմբերի 2017 թ.

«Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Կարինե Բալաբեկյանի , որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Սվետլանա Երանոսյանը, որը գործում է պետական գրանցման վկայականի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***208461 (երկու հարյուր ութ հազար չորս հարյուր վաթսունմեկ)*** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզ, գ. Ջիթհանքով 3-րդ Փող., 26/1 « Ջիթհանքովի միջն. դպրոց» ՊՈԱԿ ՀՎՀՀ 06106968 Հ/Հ 16003453401800 տնօրեն Կ. Բալաբեկյան	ՀՀ Շիրակի մարզ ք. Մարալիկ Կոմսոմոլի փողոց, տուն 35 Ա ԱՁ Սվետլանա Երանոսյան ՀՀ 16011013560700 ՀՎՀՀ 31719394
Տնօրեն ------------------ Կ. Բալաբեկյան /ստորագրություն	Ա/Ձ ____________ Ս. Երանոսյան /ստորագրություն/

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ.

Հավելված N 2
«29» դեկտեմբեր 2017թ. կնքված
ՉԻԹԴՊՐ-ՄԱԳ-2017-4ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			Հունվար	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս		
1	15811120	Հաց Մատնաքաշ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %

Վճարման ենթակա գումարը ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզ, գ. Չիթհանքով	ՀՀ Շիրակի մարզ Ք. Մարալիկ
3-րդ Փող., 26/1	Կոմսոմոլի փողոց,
« Չիթհանքովի միջն. դպրոց» ՊՈԱԿ	տուն 35 Ա
ՀՎՀՀ 06106968	ԱՁ Սվետլանա Երանոսյան
Հ/Հ 16003453401800	ՀՀ 16011013560700
Տնօրեն Կ. Բալաբեկյան	ՀՎՀՀ 31719394
Տնօրեն ---- Կ. Բալաբեկյան	Ա/Ձ ---- Ս. Երանոսյան
/ստորագրություն	/ստորագրություն/

Հավելված 1

Չիթհանքովի միջնակարգ դպրոցի ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի ապրանքների
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									Մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	15811120	հաց, մատնաքաշ	տեղական	Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %	կգ	320	208461	651,44	գ. Չիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ Հավելված N 2

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա մայիսի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզ, գ. Չիթհանքով	ՀՀ Շիրակի մարզ
3-րդ Փող., 26/1	Ք. Մարալիկ , Կոմսոմոլի փողոց,
« Չիթհանքովի միջն. դպրոց» ՊՈԱԿ	տուն 35 Ա
ՀՎՀՀ 06106968	ԱՁ Սվետլանա Երանոսյան
Հ/Հ 16003453401800	ՀՀ 16011013560700
Տնօրեն Կ. Բալաբեկյան	ՀՎՀՀ 31719394
	Տնօրեն՝ Ս, Երանոսյան
/ստորագրություն	/ստորագրություն/

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՉԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՀՀ *06106968*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ

ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՁԻԹԴՊՐ-ՄԱԳ-2017-1-7

Պատվիրատուն՝ «Լանջիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է գ. Ձիթհանքով,3-րդ փող. , 26/1 հասցեում, ստորև ներկայացնում է ՁԻԹԴՊՐ-ՄԱԳ-2017-1-7 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասին տեղեկատվությունը:

Չ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը		Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/		Պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)
			Առկա ֆինանսական միջոցներով	ընդհանուր	Առկա ֆինանսական միջոցներով[1]	ընդհանուր	
1	Բրինձ	ԿԳ	81,43	81,43	400	400	Ըստ հավելված 1-ի
2	Հնդկաձավար	ԿԳ	81,43	81,43	350	350	Ըստ հավելված 1-ի
3	Մակարոնեղեն	կգ	81,43	81,43	320	320	Ըստ հավելված 1-ի
4	հաց, մատնաքաշ	Կգ	651,44	651,44	320	320	Ըստ հավելված 1-ի
5	Շաքարավազ	Կգ	40,715	40,715	345	345	Ըստ հավելված 1-ի
6	Աղ	Կգ	16,286	16,286	180	180	Ըստ հավելված 1-ի
7	Ոսպ	կգ	40,715	40,715	540	540	Ըստ հավելված 1-ի
8	Ոլոռ	Կգ	40,715	40,715	280	280	Ըստ հավելված 1-ի
9	Լոբի	Կգ	40,715	40,715	1000	1000	Ըստ հավելված 1-ի
10	Կարտոֆիլ	Կգ	244,29	244,29	150	150	Ըստ հավելված 1-ի
11	Սոխ	կգ	40,715	40,715	250	250	Ըստ հավելված 1-ի
12	Կաղամբ	Կգ	162,86	162,86	100	100	Ըստ հավելված 1-ի
13	Ճակնդեղ	Կգ	40,715	40,715	150	150	Ըստ հավելված 1-ի
14	Գազար	Կգ	40,715	40,715	150	150	Ըստ հավելված 1-ի

[1] Եթե փոխայ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

15	Խնձոր	կգ	162,86	162,86	280	280	Ըստ հավելված 1-ի
16	Տոմատի մածուկ	Կգ	24,429	24,429	950	950	Ըստ հավելված 1-ի
17	Պանիր	Կգ	81,43	81,43	2100	2100	Ըստ հավելված 1-ի
18	Հավիմիս	Կգ	81,43	81,43	1400	1400	Ըստ հավելված 1-ի
19	Հավի ձու	կգ	81,43	81,43	1200	1200	Ըստ հավելված 1-ի
20	Բուսականյուղ, ձեթ	Կգ	81,43	81,43	760	760	Ըստ հավելված 1-ի
-							

Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը	"Գնումների մասին" ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետ

Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման					
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Բյուջե	Արտաբյուջե
					x

Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը		22.12.2017թ.	
Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը	1	-	
Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը		Հարցարդման ստացման	Պարզաբանման
	1	-	-

Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները					
		ՀՀ դրամ					
		Գինն առանց ԱԱՀ		ԱԱՀ		Ընդհանուր	
		առկա ֆինանսական միջոցներով	Ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով	ընդհանուր
Չափաբաժին 1							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	400	400			400	400
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	500	500			500	500
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	480	480			480	480
Չափաբաժին 2							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	350	350			350	350
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	360	360			360	360
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	370	370			370	370
3							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	320	320			320	320
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	330	330			330	330
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	340	340			340	340
4							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	330	330			330	330
	<<Սվետլանա Երանոսյան	320	320			320	320
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	340	340			340	340
5							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	345	345			345	345
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	400	400			400	400
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	380	380			380	380
6							
	<< Վախթանգ	180	180			180	180

	Իգիթյան>> ԱՁ						
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	200	200			200	200
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	200	200			200	200
7							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	**540**	**540**			**540**	**540**
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	600	600			600	600
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	580	580			580	580
8			<<Մանվել Ղազարյան >> ԱՁ				
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	**280**	**280**			**280**	**280**
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	**300**	**300**			**300**	**300**
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	310	310			310	310
9							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	**1000**	**1000**			**1000**	**1000**
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	**1100**	**1100**			**1100**	**1100**
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	1150	1150			1150	1150
10							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	150	150			150	150
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	200	200			200	200
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	190	190			190	190
11							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	250	250			250	250
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	110	110			110	110
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	190	190			190	190
12							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	100	100			100	100
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	120	120			120	120
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	120	120			120	120
13							
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	150	150			150	150
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	200	200			200	200
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	210	210			210	210
14							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	150	150			150	150
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	250	250			250	250
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	240	240			240	240
15							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	280	280			280	280
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	330	330			330	330
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	350	350			350	350
16							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	950	950			950	950
	<<Նորիկ Հակոբյան >>	980	980			980	980

	ԱՁ						
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	960	960			960	960
17							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	2100	2100			2100	2100
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	2260	2260			2260	2260
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	2250	2250			2250	2250
18							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	1400	1400			1400	1400
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	1500	1500			1500	1500
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	1500	1500			1500	1500
19							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	1200	1200			1200	1200
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	1400	1400			1400	1400
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	1400	1400			1400	1400
20							
	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	760	760			760	760
	<<Նորիկ Հակոբյան >> ԱՁ	800	800			800	800
	<<Մանվել Ղազարյան >> ԱՁ	820	820			820	820
Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝						

Տվյալներ մերժված հայտերի մասին

Չափա-բաժնի համարը	Մասնակցի անվանումը	Գնահատման արդյունքները (անբավարար)								
		Ծրարը կազմելու և ներկա-յացնելու համա-պատաս-խանութ-յունը	Հրավերով պա-հանջվող փաստա-թղթերի առկա-յությունը	Առաջարկած գնման առարկայի տեխնիկա-կան հատկանիշ-ների համա-պատասխա-նությունը	Մասնա-գիտա-կան գոր-ծունեու թ-յուն	Մասնա-գիտա-կան փոր-ձառութ-յունը	Ֆինա-նսական միջոցներ	Տեխնի-կական միջոց-ներ	Աշխա-տանքա-յին ռեսուրս-ներ	Գնային առաջա րկ
Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝									

Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը	22.12.2017թ.	
Անգործության ժամկետ	Անգործության ժամկետի սկիզբ	Անգործության ժամկետի ավարտ
	-	-
Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը	22.12.2017թ.	
Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը	«Ձիթհանքովի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-.25,12,2017թ.	
Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը	«Ձիթհանքովի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-.29,12,2017թ	

Չափա-բաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Պայմանագրի					
		Պայմանագրի համարը	Կնքման ամսաթիվը	Կատարման վերջնա-ժամկետը	Կանխա-վճարի չափը	Գինը	
						ՀՀ դրամ	
						Առկա ֆինանսական միջոցներով	Ընդհանուր
1-3,5-20	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	ՁԻԹԴՊՐ-ՄԱԳ-2017-1-7	29,12,2017	25,12,2018		766948	766948
4	<<Սվետլան ա Երանոսյան	ՁԻԹԴՊՐ-ՄԱԳ-2017-4	29,12,2017	25,12,2018		208461	208461

	>> ԱՁ						

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն					
Չափա-բաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Հասցե, հեռ.	Էլ.-փոստ	Բանկային հաշիվը	ՀՎՀՀ
1-3,5-20	<< Վախթանգ Իգիթյան>> ԱՁ	Ք. Մարալիկ .Հրանտ Շահինյան 5, հեռ 093-41-78-75		16003004112500	61715678
4	<<Սվետլանա Երանոսյան >> ԱՁ	Ք. Մարալիկ. Կոմսոմոլի փող. Տուն 32 Ա 093-13-62-66		16011013560700	61719394

Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը 2-րդ-ից 56-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:
Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները	www.gnumner.am
Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը	
Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները	
Այլ անհրաժեշտ տեղեկություններ	

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող		
Անուն, Ազգանուն	Հեռախոս	Էլ. փոստի հասցեն
Արփինե Խաչատրյան	093272403	arpiekh@mail.ru

Պատվիրատու՝ ***<< Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ***

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՁԻԹԴՊՐ- ՄԱԳ-2017 1-7

գ. Ձիթհանքով

«29» դեկտեմբերի 2017 թ.

«Ձիթհանքովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Կարինե Բալաբեկյանի , որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Վախթանգ Իգիթյանը, որը գործում է պետական գրանցման վկայականի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են <u>10</u> օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 766948 ***(յոթ հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր քառասունութ)*** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզ, գ. Ջիթհանքով	ՀՀ Շիրակի մարզ
3-րդ Փող., 26/1	Ք. Մարալիկ , Հր. Շահինյան 5
« Ջիթհանքովի միջն. դպրոց» ՊՈԱԿ	ԱՁ Վախթանգ Իգիթյան
ՀՎՀՀ 06106968	ՀՀ 16003004112500
Հ/Հ 16003453401800	ՀՎՀՀ 61715678
Տնօրեն Կ. Բալաբեկյան	
Տնօրեն ---------- Կ. Բալաբեկյան	Տնօրեն ____________ Վ. Իգիթյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 2
«29 » դեկտեմբեր 2017թ. կնքված
ՁԻԹԴՊՐ-ՄԱԳ-2017-1-7ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<<

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			Հունվար	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս		
1	15112160	Հավի մսեղիք,տեղական, ամբողջական,սառեցված	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
2	15831000	Շաքարավազ սպիտակ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
3	15411200	Արևածաղկի ձեթ,ռաֆինացված,/զտած/	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
4	3142500	Ձու, 01կարգ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
5	15542000	Պանիր չանախ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
6	15333100	Տոմատի մածուկ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
7	15872400	Աղ, կերակրի, մանր	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
8	3211300	Բրինձ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
9	15331151	Լոբի, հատիկավոր	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
10	15331153	Ոսպ, ամբողջական	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
11	15616000	Հնդկաձավար	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
12	15331154	Ոլոռ դեղին	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %

13	15313000	Կարտոֆիլ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
14	15331164	Գազար	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
15	15331163	Ճակնդեղ, արմատապտուղ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
16	15331161	Սոխ, գլուխ	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
17	3221410	Կաղամբ, չմաքրած	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
18	15851100	Մակարոնեղեն	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %
19	15332140	Խնձոր, միջին չափի	20 %	40 %	60 %	80 %	100 %		100 %

Վճարման ենթակա գումարը ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ Շիրակի մարզ, գ. Ջիթհանքով
3-րդ Փող., 26/1
« Ջիթհանքովի միջն. դպրոց» ՊՈԱԿ
ՀՎՀՀ 06106968
Հ/Հ 16003453401800
տնօրեն Կ. Բալաբեկյան

Կ. Բալաբեկյան
/ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ Շիրակի մարզ
ք. Մարալիկ, Հր. Շահինյան 5
ԱՁ Վախթանգ Իգիթյան
ՀՀ 16003004112500
ՀՎՀՀ 61715678
Տնօրեն Վ. Իգիթյան

Տնօրեն _______ Վ. Իգիթյան
/ստորագրություն

Հավելված 1

Ջիթհանքովի միջնակարգ դպրոցի ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի ապրանքների
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	15614000	Բրինձ	տեղական	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 14%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.	կգ	400	32572	81,43	գ.. Ջիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
2	15616000	Հնդկաձավար	տեղական	Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիությանմնացորդայինժամկետըոչպակասքան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբհաստատված «Հացահատիկին, դրաարտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանըներկայացվողպահանջներիտեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	350	28501	81,43	գ.. Ջիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
3	15851100	Մակարոնեղեն	տեղական	Մակարոնեղենխմորից, կախվածայուրիտեսակից և որակից՝ A (պինդցորենիալյուրից), Б (փափուկապակենմանցորենիալյուրից), B (հացաթխմանցորենիալյուրից), չափածրարված և առանցչափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, խմակնշումը՝ «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	320	26058	81,43	գ.. Ջիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
	15831000	Շաքարավազ		Սպիտակագույնի, սորուն, քաղցր,		345	14047	40,715			Ըստ

4			տեղական	առանցկողմնակիհամի և հոտի (ինչպեսչորվիճակում, այնպեսէլլուծույթում): Շաքարիլուծույթըպետք է լինիթափանցիկ, առանցչլուծվածնստվածքի և կողմնակիխառնուկների, սախարոզիզանգվածայինմասը՝ 99,75%-իցոչպակաս (չորնյութիվրահաշված), խոնավությանզանգվածայինմասը՝ 0,14%-իցոչավել, ֆեռոխառնուկներիզանգվածայինմասը՝ 0,0003%-իցոչավել, պիտանելիությանմնացորդայինժամկետը՝ մատակարարմանպահինսահմանվածժամկետի 50%-իցոչպակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ				գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		հավելված 2
5	15872400	Աղ	տեղական	Կերակրիաղ՝ բարձրտեսակի, յոդացված ՀUS 239-2005 Պիտանելիությանժամկետըարտադրմանօրվանիցոչպակաս 12 ամիս:	կգ	180	2931	16,286	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
6	15331153	Ոսպ	տեղական	Երեքտեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ 14,0% ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	540	21986	40,715	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
7	15331154	Ոլոռ	տեղական	Չորացրած, կեղևած, դեղինկամկանաչգույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	280	11400	40,715	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
8	15331151	Լոբի	տեղական	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 14 %ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %:	կգ	1000	40715	40,715	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2

9	15313000	Կարտոֆիլ	տեղական	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանցվնասվածքների, կլորձվածև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլորձվածև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլորձվածև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլորձվածև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսակաևումաքրությունը՝ 90 %-իցոչպակաս, փաթեթավորումը՝ առանցչափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	150	36644	244,29	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
10	15331161	Սոխ	տեղական	Թարմ, կծու, կիսակծուկամքաղցր, ընտիրտեսակի, Նեղմասիտրամագիծը 3 սմ-իցոչպակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբհաստատված, Թարմպտուղբանջարեղենիտեխնիկականկանոնակարգի և Սննդամթերքիանվտանգությանմասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	250	10179	40,715	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
11	15331142	Կաղամբ	Տեղական	ևՀՀօրենքի 8-րդ հոդվածի:	կգ	100	16286	162,86	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
12	15331163	Ճակնդեղ	տեղական	Արտաքինտեսքը՝ արմատապտուղներըթարմ, ամբողջական, առանցհիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանցճաքերի և վնասվածքների: Ներքինկառուցվածքը՝ միջուկըհյութալի, մուգկարմիր՝ տարբերերանգների: Արմատապտուղներիչափսերը (ամենամեծլայնակիտրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներնշվածչափսերից և մեխանիկականվնասվածքներով 3 մմավելխորությամբ՝ ընդհանուրքանակի 5%-իցոչավելի: Արմատապտուղներինկպածհողիքանակությունըոչավել քանընդհանուրքանակի 1%:	կգ	150	6107	40,715	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
				Սովորական և ընտիրտեսակի: Անվտանգությունը և			6107	40,715			Ըստ

13	15331164	Գազար	տեղական	մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	150			գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		հավելված 2
14	15332140	Խնձոր	տեղական	Խնձորթարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանիտարբերտեսակների, նեղտրամագիծը 5 սմ-ից չպակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբհաստատված "Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի"և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	280	45601	162,86	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
15	15333100	Տոմատի մածուկ	տեղական	Բարձրկամառացինտեսակների, ապակեկամմետաղյատարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի :	կգ	950	23208	24,429	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
16	15540000	Պանիր	տեղական	Սպիտակաղաջրայինպանիր, կովիկաթից, 36-40% յուղայնությամբ: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբհաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանցարտադրությանըներկայացվողպահանջներիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2100	171003	81,43	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
17	15112110	Հավիմիս	տեղական	Բրոյլերտիպի, առանցփորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանցկողմնակիհոտերի, փաթեթավորվածպոլիէթիլենայինթաղանթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19 ի N 1560-Ն որոշմամբհաստատված "Միս և մսամթերքիտեխնիկականկանոնակարգի" և "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1400	114002	81,43	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2

18	3142500	Հավիճու	տեղական	Զուտեղանիկամդիետիկ, 1-ին կարգի, տեսակավորվածըստմեկծվիզանգվածի, դիետիկծվիպահմանժամկետը՝ 7 օր, սեղանիծվինը՝ 25 օր, սառնարանայինպայմաններում՝ 120 օր: Պիտանելիությանմնացորդայինժամկետըոչպակասքան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականիհեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքիտեխնիկականկանոնակարգըհաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	1200	97716	81,43	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
	15412200	Բուսականյուղ, ձեթ	տեղական	Պատրաստվածարևածաղկիսերմերիլուծամզման և ճզմմանեղանակով, բարձրտեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2 III-4.9 01-2010 հիգիենիկնորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքիանվտանգությանմասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	760	61887	81,43	գ.. Ձիթհանքով, 3-րդ Փող.,26/1		Ըստ հավելված 2
19											

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա մայիսի 25-ը:
** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ՀՀ Շիրակի մարզ, գ. Ձիթհանքով
3-րդ Փող., 26/1
« Ձիթհանքովի միջն. դպրոց» ՊՈԱԿ
ՀՎՀՀ 06106968
Հ/Հ 16003453401800
Տնօրեն Կ. Բալաբեկյան

/ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ Շիրակի մարզ
Ք. Մարալիկ , Հր. Շահինյան 5
ԱՁ Վախթանգ Իգիթյան
ՀՀ 16003004112500
ՀՎՀՀ 61715678
Տնօրեն Վ. Իգիթյան

/ստորագրություն